դամ կանգ առաւ վրաց Հերակլ թագաւորի վրայ, որը այդ ժամանակներում մեծ անուն էր հանել իր քաջարի գործողութիւններով, մանաւանդ որ նա համարւում էր Բագրատունեաց շառաւիղը եւ ուրեմն օրինական ժառանգը հայկական գահի:

Ըստ Էմինի ծրագրի՝ Հերակլը պիտի անցնէր հայ զինուորութեան գլուխը եւ իրականացնէր Հայաստանի երկու մասերի էլ ազատութիւնը — պարսից Հայաստանի եւ տաճկաց Հայաստանի: Այս ուղղութեամբ էլ նա Թիֆլիսում բանակցութիւններ է վարում Հերակլի հետ, բայց արդիւնքը՝ նորից յուսախաբութիւն1):

Փակագծերի մէջ իսկոյն աւելացնենք, որ այդ միջոցին Էջմիածնում կաթողիկոս էր Սիմէոն Երեւանցին — մի շատ զգոյշ եւ հեռատես մարդ: Նա եւս ջերմ կողմնակից էր հայերի ազատութեան, մի զօրեղ պետութեան ձեռքով միայն, առանց հայերի գործօն մասնակցութեան: Ուստի իր հոգու բոլոր կարողութեամբ նա հակառակուեց Էմինի ապստամբական ծրագրին:

Էմինի ծրագիրը թէեւ չիրականացաւ՝ սակայն եւ չմեռաւ: Հնդկաստան վերադառնալով, նա՝ Էմինը՝ հաղորդակից արաւ այդ ծրագրին Շահամիրեանի նշանաւոր ընտանիքին: Եւ Յակով Շահամիրեանն էլ վերցրեց այդ ծրագիրը եւ նրան տուեց գրական կերպարանք:

Նա գրեց երկու գիրք — «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ» (Մադրաս, 1772 թ.) եւ «Որոդայթ Փառաց» (Մադրաս, 1773 թ.): Դրանք առաջին հայ գրքերն են քաղաքական բովանդակութեամբ եւ հայ քաղաքական մտքի առաջին գրական արտայայտութիւնները:

«Յորդորակ»ի մէջ Շահամիրեանը կրկնում է նոյն մտքերը, ինչ որ Էմինը քարոզել էր Հայաստանի զանազան մասերում: Հայ ժողովուրդը դժբախտ է եւ ստրուկ. դրա պատճառը ինքը հայն է, որ ծոյլ է, հեղգ եւ սիրում է ստրկութիւնը: Բայց եթէ ուզենայ՝ նա կարող է ազատուել, եթէ թողնի իր այդ յատկութիւնները եւ շարժուի ու գործի: Շարժման գլուխ պիտի կանգնի վրաց Հերակլ թագաւորը եւ իրականացնի Հայաստանի ազատութիւնը:

«Որոդայթ Փառաց»ի մէջ եւս համառօտաբար նոյն մտքերն արծարծելուց յետոյ՝ Շահամիրեանը տալիս է այն հմքերը կամ այն օրէնքները, որոնցով պիտի կառավարուի ազատագրուած Հայաստանը:

Ու հեղինակը համոզուած է, որ իր առաջադրած միջոցներով Հայաստանը կ'ազատուի անպայմանօրէն եւ հայ ժողովուրդն էլ իր անկախ հայրենիքում կը բարգաւաճի երջանիկ ու բախտաւոր — իր տուած օրէնքների շնորհիւ1):

6.

Հայաստանի ազատութեան խնդիրը մի անգամ եւս շատ զօրեղ կերպով բորբոքւում է Եկատերինա Բ. կայսրուհու օրով (1762–1796), որը եւ կազմում է ռուսական օրիենտացիայի երկրորդ շրջանի ամենահարուստ մասը:

Բորբոքւում է, որովհետեւ Եկատերինան, հաւատարիմ Պետրոս Մեծի մէկ ծրագրին — այսպէս կոչուած՝ Հնդկական ծրագրին — ձգտում էր վերջնականապէս գրաւել Կասպիականի ափերը եւ Կասպից ծովը դարձնել ռուսական ծով: Դա անհրաժեշտ էր Ռուսաստանին, բացի սահմանների ընդարձակումից, նաեւ առեւտրի ու արդիւնաբերութեան զարգացման տեսակէտից: Այդպիսով Հնդկաստանի ապրանքները Կասպից ծովով կը մտնէին Ռուսաստան, յետոյ ջրային ճանապարհներով կը հասնէին Բալթիկ ծովը եւ այնտեղից էլ կը մտնէին Արեւմտեան Եւրոպա:

Պարզ է ուրեմն, որ Կասպից ծովի «ռուսականացումը» հրամայական մէկ պահանջ էր Ռուսաստանի համար: Իսկ Ռուսաստանի միայն մօտենալը Կասպիականի ափերին բաւական

1) Էմինի ծրագիրը լոյս է տեսել մի ըստուար հատորում (80, 640 էջ), անգլիերէն լեզուով, Լոնտոնում, 1792 թուին: Գրուածքի անունն է՝ «Յովսէփ Էմին հայուն կեանքն ու արկածները, գրուած իրմէն» (Հ. Ա. Ղազիկեան՝ «Հայկական Նոր մատենագրութիւն եւ Հանրագիտարան Հայ Կեանքի», Ա. հատոր, Վենետիկ, 1912 թ., եր. 683):

1) Լէօ՝ «Հայոց Հարցի Վաւերագրերը», եր. 11: Աւելի մանրամասն տես մեր յօդուածը՝ «Յակով Շահամիրեան»: